


35- ԱՄԵԱԿ

ՊԵՏԻԿ ԻՆՃԷԵԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ

Զինեալ նորոտայ պայքարի
առաջին նահատակ



ՊԵՏԻԿ ԻՆՃԵՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նուէր՝ Յակոբ Ծանապազեանին

Խօսք՝ Գրիգոր Հոթոյեանի

Երաժշտ. Սարգիս Համպոյեանի

Մազ շակ յոս թեան հո շոս սիւն ի թ ջ
Թոս հո սա Յ հե թոս շե թոս
Վեհ ոս Գր ոս Վ յոս Գոս սա ճ
Իսս սակ ս ոս ր թարթար Իսս սակ Իսս ս
Կաւ թարթակ յոս կաւ շ թե կեր
Պե սիկ իւն Գր Ես շ
Սոս սա լե թոս շ թարթար շե թ շ շ
Սոս սակ շոս կաւ շ սոս սակ հոս ղե թ շ շ
Սոս ծան ոս Գր շ սոս կա յոս թեան
հե թոս թե կեր սոս հոս սոս կաւ շ

«ԴԱՐՉԵԱԼ ՄԻ ՀԵՐՈՍ ԻՆԿԱՒ ՆԱՀԱՏԱԿ»

35 տարիներ անցան այն օրեն, երբ Վիտոշի գործողության նմանող դեպք մը պատմության անշնչելի էջերուն վրայ արձանագրեց մեր գինեալ նորօրեայ պայքարի առաջին նահատակին անունը:

Դաշնակցականի վեհ գիտակցութեամբ եւ «Միայն զէքով կայ հայոց փրկութիւն» պատգամին հաւատալով՝ անկեղծ գինուորը մեկնեցաւ Երոպայի մայրաքաղաքներէն մէկը:

Մեկնեցաւ իրեն վստահուած «գործը» կատարելու, դարձաւ նահատակ վրէժխնդրութեան բագինին՝ իր ետին ձգելով անմոռանալի յիշատակներ:

Այնճար գիւղի հարազատ գաւակն էր ան, գաւակը Յովհաննէս եւ Ալիս Ինճէաններուն, եռանդուն անդամն էր ՅՅԴ «Յառաջ» պատանեկան միութեան, թիկունքը՝ երիտասարդական միութեան, սկաուտն ու մարզիկը՝ ՅՄԸՄ-ի, արժանաւոր ժառանգորդը՝ չաւուշներուն եւ դումաններուն, թոռը՝ մուսալեռցի հերոս պապերուն:

Ընկեր Պետիկ Ինճէանն էր ան:

27 մայիս 1976: Հայաստանի անկախութեան 58-րդ տարեդարձէն օր մը առաջ, պայթիւն մը խլեց կեանքը սարդարապատեան ոգիով թրծուած երիտասարդի մը, որ տակաւին 26 գարուններ չէր բոլորած. թաղուեցաւ անշուք, «անտեր»ներու դամբանին մէջ, առանց պատշաճ «ննջեցելոց»ի մը, անմխիթար ձգելով ընտանիքը, հարազատներն ու գաղափարակից ընկերները:

Սակայն, այսօր, անոր լուռ նահատակութիւնը կը դառնայ բոցավառ ջահ մը՝ մեր գոյապայքարի սրբազան երթին վրայ: Անձնուիրութեան վառ օրինակով կը դաստիարակէ մեր գիւղի պատանիներն ու երիտասարդները, որոնք պատրաստ են ամէն տեղ եւ ամէն վայրկեան «ո՛չ» ըսելու թուրքին եւ թրքաբարոյ երեւոյթներուն, պատրաստ են դառնալու Հայ դատի գինուորներ՝ աշխարհի չորս ծագերուն, պատրաստ են տեր կանգնելու Հայաստանին ու հերոսական Արցախին՝ իրենց սրտերուն մէջ պահած ամբողջական Հայաստանի տեսլականը:

Ընկեր Պետիկ,

Գիտենք, որ քու աճիւններդ հանգիստ չեն, քանի հայրենիքէն հեռու են, բայց վստահ ենք, որ քու դաշնակցականի անբիծ հոգիդ թելեր առած՝ կը սաւառնի մայր հայրենիքի երկնակամարին վրայ՝ գծելով Ամբողջական Հայաստանի սահմանները: Սիրելի՛ ընկեր, քու գծած ուղիդ յստակ է եւ «պիտի գնանք վաղ թէ ուշ»:

ՅՅԴ «Կարմիր Լեռ» կոմիտեութեան բոլոր ընկերները կը խոնարհին քու անյայտ գերեզմանիդ առջեւ եւ կ'երգեն՝ «Շարունակէք մեր Սուրբ Գործը, Դաշնակցութեան վե՛հ քաջեր...»:

**Յ.Յ.Դ. «ԿԱՐՄԻՐ ԼԵՌ» ԿՈՄԻՏԵԻ
ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄ**

27 Մայիս, 2011
Այնճար

ԳԱՂԱՓԱՐԻ ԸՆԿԵՐՈՉՍ...

Միասնականությունը գլխաւորին մէջ է,
Ազատութիւնը՝ երկրորդականի,
իսկ Սերը՝ ամեն ինչի:

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Դեռեւս պատանի Չարենց իր ընկերներուն հետ կ'երթար իր ծննդավայրի՝ Կարսի մօտերէն անցնող Արփաչայ գետը լողալու, իսկ մենք, երբ պատանի էինք կ'երթայինք մեր ծննդավայրի՝ Այնճարի Գարաչայը լողալու, ուր ձուկ կ'որսայինք, գորտ եւ խեչափառ կը բռնէինք, կը խորովէինք եւ կ'ուտէինք, յաճախ՝ առանց աղի ու հացի: Միասնական էինք, ուրախ եւ ազատ, նոյնիսկ անհոգ կրնամ ըսել: Կը սիրէինք զիրար, կը սիրէինք մեր գիւղն ու գիւղացիները, փողոցներն ու արտերը, բոպիկ կը մագլցէինք Անդի-լիբանանի լեռները, ուրկէ արեւը կը ծագեր, եւ ուրկէ աշխարհը կը սկսեր մեզի համար ու կը վերջանար Տահր Պայտարի՝ ուղտասարի մէջքին, ուր արեւը մար կը մտներ...



Սկսանք մեծնալ, սկսանք լրջանալ ու ինքնագիտակցութեան գալ: Ո՞վ ենք մենք, ուրկէ՞ կու գայինք եւ ինչո՞ւ հոս կ'ապրինք՝ Լիբանան եւ ոչ թէ Մուսա լեռ եւ կամ Հայաստան: Կազմաւորուեցանք ու թրծուեցանք «Բաբգէն Սիւնի»ի յարկին տակ ու Բաբգէն Սիւնիի ոգեղէն ներկայութեամբ: Սիրեցինք զիրար, սիրեցինք Բաբգէն Սիւնին ու իր ընկերները՝ մեր ֆետայիները, մեր կուսակցութիւնը, սիրեցինք Մուսա լեռն ու գիւղերը մեր, մեր հողերն ու թագաւորները, մեր լեռներն ու ձորերը, սիրեցինք մեր լիճերը եւ նոյնի՛սկ ծովերը, ու դեռ՝ մեր երգերն ու վերքերը, մեր գաղափարի մարտիկներն ու մագաղաթի վարպետները:

Գաղափարի ընկերներ էինք, այո՛, Յակոբն ու Սեպուհը, Վարուժանն ու Մովսէսը, Մովսէսն ու Յովհաննէսը, Փանոսն ու Պետրոսը,

Նորայրն ու Սերոբը, ու դեռ շա՛տ շատեր...: Մեր հոգիները ջրդեղուեցան Նեմեսիսի բոցակեզ ատրուշանին ու կամքերը մեր կարծրացան ու կոշկոռ կապեցին թունաւոր օձերու տատասկները արհամարհող մեր ներբաններուն նման:

«Դժբախտաբար ես ուշ ծնայ» կը գրեր մեր ընկերներէն մէկը իր շարադրութեան տետրակին մէջ: Այո՛, մեր ազգային գիտակցութիւնը, պատրաստուածութիւնն ու պատրաստակամութիւնը հասած էին այնպիսի «խանդավառ» աստիճանի, որ մենք զմեզ դժբախտ կը զգայինք ուշ, շա՛տ ուշ ծնած ըլլալնուս համար: Այդպէս էինք մենք, այդպէս էր մեր սերունդը Այնճարէն մինչեւ Պուրճ Յամուտ եւ «Արագած» թաղէն մինչեւ Արագածի լանջերուն...:


Ու օր մըն ալ, գեղեցիկ ու լուսաւոր օր մը, մեզի «պաշտօնապէս» տեղեկացուցին, թէ մենք չենք ուշացած, ծնած ենք ճիշդ ժամանակին եւ «պարտականութեան» ճի՛շդ ճանապարհին վրայ...:

Շատ էինք մենք: Ճակատագիրը մեզ ցրուեց տարբեր ուղղութեամբ եւ ողջ աշխարհի տարածքին: Դուն մնացիր ուխտեալ ընկերներուդ հետ՝ քիչերու հետ: Մեր ֆետայիներէն ու Մուսա լերան հերոսներէն ժառանգ մնացած «կրակէ շապիկները» հագուեցանք, որպէսզի մեր թռռներն ու ծոռները զիրար սիրեն, միասնական ոգիով եւ ազատօրէն երթան ու լողան նաեւ Արփաչայի մէջ, ձուկ որսան, գորտ ու խեչափառ բռնեն, խորովեն եւ ուտեն, թէկուզ՝ առանց աղի ու հացի...:

Սակայն...

Այդ նոյն ճակատագիրը ամբողջ դաժանութեամբ քեզի վերապա-





հաճ էր «ազնուագոյնը» մահերուն: Գուցէ դարձեալ ճակատագրի բերումով, չարաղետ դեպքէն շաբաթներ անց միայն, ես հո՛ն էի, հո՛ն, ուր «գիտակցաբար» մարմինդ բզկտեցիր ու կենսատու նշխարի նման բաշխուեցար վերանորոգելու համար ընկերներուդ կեանքը, որպէսզի անոնք (ու նաեւ հետագայ սերունդները) դարձեալ հագնին «կրակէ շապիկներ»ը ու իջնեն սրբազան պայքարի...:

Սիրելի՛ գաղափարի ընկեր...

Հասարակ մահկանացուներուն վիճակուած չէ հերոսանալ, որովհետեւ իւրաքանչիւր հերոս գերմարդ մըն է, գուցէ կիսաստուած մը՝ մեր հերոս պապերու հասկացողութեամբ, սակայն իւրաքանչիւր գերմարդ ինքնին զոհ մը կ'ենթադրէ: Դուն ու քեզի պէս շատեր նահատակուեցան Նեմեսիսի սրբազան բագինին, իբրեւ Միասնակա-նութեան եւ Համերաշխութեան առհաւատչեայ, իբրեւ Ազատու-թեան եւ Արդարութեան մարտիկ եւ նաեւ՝ իբրեւ Սիրոյ ու Գաղա-փարի թթխմոր...: Փա՛ռք ու պատիւ ձեզ...

Մ. Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ

(24 Ապրիլ 2011, Այնճար)

ԿՏՐԻՃ, ՀԱՐԱԶԱՏ ԸՆԿԵՐԸ

Տակաւին «պատանի» էինք «Յառաջ» պատանեկան միութեան մէջ, բայց սկսած էինք երիտասարդի հոպեր առնել: Ընկերներ էինք. սակայն ընկեր կայ, ընկե՛ր կայ: Կայ տարեկից ընկեր, կայ խաղընկեր, կայ դասընկեր, կայ գործընկեր եւ կան տեսակաւոր ընկերներ: Մենք գաղափարի ընկերներ էինք: Մեզի համար բարոյական սկզբունքները գերադաս էին բոլոր անհատական նկատումներէն: Մենք անկեղծ էինք իրարու հանդէպ: Պարզ, ջինջ ու յստակ: Մենք չէինք կասկածեր իրարու վրայ, չէինք նախանձեր, չէինք վախնար իրարմէ: Մենք բնաւ չէինք փորձած գիրար խաբել, կամ անորոշ, մութ ու անստոյգ, ուշադրութիւն շեղել փորձող ապատեղեկատուութիւն փոխանցել իրարու: Մենք կը վստահէինք իրարու: Մեր յարաբերութիւնները անկեղծ էին՝ առանց յետին հաշիւներու, առանց դաւադրութիւններու: Մենք հոգի կու տայինք իրարու: Ընկերական բարոյական նկարագիրն էր, որ անքակտելիօրէն մեզ կը կապեր իրարու: Այդ բարոյականը նախանձախնդրօրէն պահպանելու բնածին առաքեալը ընկեր Պետիկ Ինճեանն էր: Մենք շատ լաւ կը հասկնայինք գիրար: Այդ հասկացողութեան առանցքը ընկեր Պետիկն էր: Ան կը լուծեր մեր միջեւ ծագած բոլոր հարցերը՝ միշտ վեհանձնօրէն իր «ես»ը գոհելով ընկերներուն սիրոյն: Մենք միշտ կը վստահէինք իր



լայնախոհ, անաչառ ու արդարամիտ դատողութեան: Իր ազնիւ, խոնարհ, մեղմ ու բարեհաճ վարմունքը մագնիսի պէս մեզ կը քաշեր դէպի իր անձը: Սակայն այդ հեզ ու համեստ տղան անզիջող ու պահանջկոտ էր ազգային հարցերու նկատմամբ, հոն այլեւս չկար փաղաքշանք, կարմիր գիծէն անդին կար միայն պահանջ: Ան, որ բախտը ունեցած է անոր հետ ընկեր ըլլալու, ա՛ն միայն կրնայ գնահատել իսկական ազգային ոգի ունեցող ընկերոջ արժէքը:

«Բարգէն Սիւնի» կը կոչուէր մեր հին ակումբը, որուն պատերը զարդարուած էին ֆետայիներու նկարներով, իսկ մէջտեղը Բարգէն Սիւնիին մեծադիր նկարը գետեղուած էր: Այդ տարիքին, կլանուած՝ ֆետայիներու հերոսական դրուագներով, թափ տալով մեր երեւակայութեան, գաղտագողի կը փորձէինք ֆետայիներուն նմանիլ:

Չարմանալիօրէն ես Պետիկը կը նմանցնէի Բարգէն Սիւնիին: Երբ Պետիկը ակումբ մտներ, իսկոյն ես բնազդաբար կը փորձէի բաղդատել զինք Բարգէն Սիւնիին հետ: Կը պատկերացնէի, ճի՛ւր ու ճիշդ ինքն էր: Նայուածքը ճիշդ Բարգէն Սիւնիինն էր, նոր ծլած պէխերը, մազերուն սանտրուած ոճը: Ափսոս, որ Բարգէն Սիւնիին գունաւոր նկարը չունէինք, բայց անպայման խարտեաշ՝ «**պլոնտ**»ի վրայ պետք էր ըլլար, ճի՛շդ Պետիկին պէս, հաւանաբար միջահասակ ու թիկնեղ: Նկարագիրը անպայման նոյնը պետք էր ըլլար: Ի՞նչ է տարբերութիւնը, գրեթէ տարեկից էին: Եթէ Պետիկը այն ժամանակ ըլլար, անպայման Բարգէն Սիւնիին ընկերը պիտի ըլլար: Մեղա՛յ, մեղա՛յ, ուր հասանք...

Շատ չանցած, արդէն մենք շնորհքով երիտասարդներ էինք, բայց միշտ՝ պատանիի հոգիով մտերիմ հոգիներ: Գիտէ՞ք՝ որքա՛ն երանելի է, երիտասարդ ըլլալով հանդերձ պատանեկան անկեղծութեամբ ընկերներ ունենալ: Սակայն շատ բան փոխուած էր: Բոլորս սկսած էինք մեր ապագայի մասին մտածել: Ճիգ չէինք խնայեր փայլուն ապագայ մը կերտելու: Մէկը ուսանելու ծրագիրներ կը մշակէր, միւսը արհեստի, ուրիշ մը ճամբորդութեան... Պետիկին համար այդ բոլորը «պարապ» բաներ էին: Իր ապագայի ծրագիրները թաքուն էին: Մեզի պէս բարձրաձայն չէր արտայայտուեր: Միշտ լրջախոհ դէմքով, խոր մտածումներու մէջ թաղուած էր, սակայն, երբ ընկեր մը տեսներ, յանկարծ նախկին պատանեկան թեթեւ ժպիտը կը գծագրուէր դէմքին վրայ: Մենք չէինք համարձակեր հարցնել իրեն, թե՛ ինչ կը մտածէր կամ ի՞նչ կը ծրագրէր...

Որո՞ւ մտքէն կ'անցներ, թէ մենք պիտի վերադառնանք հին «տեռորիստական» օրերը եւ դարձեալ պիտի սկսէր հակաթուրք զինեալ պայքարը...

Ընկեր Պետիկին դէմքը փոխուած էր, խոկուն աչքերը կայծակի



պես կը փայլէին: Այո՛, կարծես անոր բախտը բացուած էր: Ի՞նչ կրնար ըլլալ իրեն համար աւելի փայլուն ապագայ, քան նուիրուիլը ազգային ազատագրական պայքարին:

Այնճարի ԼԵՄ-ի «Շաւարշ Միսաքեան» մասնաճիւղին պատասխանատուն էր, երբ գնաց իր «ապագան» կերտելու... Եւ հասաւ նպատակին:

Նոյն մաքրամաքուր պատանիի ոգիով, յանդգնօրէն նետուեցաւ սրբազան պայքարին գիրկը եւ անսակարկ կեանքը նուիրեց ազգին: Միայն այն ատեն կրցանք ըմբռնել, թէ ինք ի՞նչ կը ծրագրէր իր ապագային մասին:

Վերջին հակաթուրք գիտեալ պայքարին առաջին նահատակը հանդիսացաւ: Ես սխալած չէի իմ պատկերացումներուս մէջ:

Մեր նոր՝ «Ս. Չէյթեան» ակումբին ԼԵՄ-ի «Շաւարշ Միսաքեան» բաժանմունքը ընկեր Պետիկին անունով մկրտուած է, եւ անոր քաղցրադէմ նկարը իր սիրելի ձիուն հետ միասին քանդակուած է մուտքին, ճի՛շդ Բարգէն Սիւնիին դիմացը: Այժմ մատղաշ սերունդները ընկեր Պետիկին կերպարէն պիտի ներշնչուին եւ հայոց պահանջատիրութեան երթը աննահանջ պիտի շարունակեն:

Որքա՛ն կարօտցած եմ իմ հին օրերու «պատանի» ընկերս:

ՄՈՎՍԵՍ Թ. ՅԵՐԿԵԼԵԱՆ

ՎԵՐՅԻՇԵԼՈՎ ԸՆԿ. ՊԵՏԻԿ ԻՆՃԷԵԱՆԸ


Նահատակութեան 35-ամեակին առիթով

ՉԻԱՒՈՐԸ

Ամեն անգամ, երբ կը փորձեմ պատկերացնել ընկ. Պետիկ Ինճէ-
եանին դիմագիծը, ամենէն առաջ միտքս կու գայ ձիուն վրայ
խրոխտ կերպով բազմած երիտասարդը. ան որ կ'անցներ մեր
Խտըրպէկի տղոց ֆութպոլի փողոցէն՝ ընդհատելով մեր խաղը:
Տպաւորիչ էր ձիով իր անցքը: Ընդհանրապէս առանձին չէր ըլլար,
ընկերակից կ'ունենար, նոյնպէս՝ ձիաւորներ ընկ. Սեպուհ Սգայ-
եանն ու Գարլօ Յազարեանը:

Ասֆալթին վրայ ձիերուն սմբակներուն ձայնը թէ՛ կը վախցներ
մեզ, թէ՛ կը տպաւորէր: Տարօրինակօրէն մեր աչքին առջեւ կ'երեւա-
կայէինք տեսնել մեր ֆետայիները, մանաւանդ որ «Բաբգէն Սիւնի»
ակումբին մէջ մեր վրայ մեծ տպաւորութիւն ձգած էր ճերմակ ձիուն
վրայ նստած Անդրանիկ փաշային մեծ լուսանկարը...

Պատահեցաւ նաեւ, որ ՅՄԸՄ-ի ֆութպոլի դաշտին վրայ երթանք
դիտելու ձիերուն վազքը. կարմիր, սեւ եւ ճերմակ երեք ձիեր վազքի



ընթացքին: Տպաւորիչ փորձեր էին, որոնք անջնջելի կերպով դրոշմուեցան մեր պատանի ուղեղներուն մէջ:

Հիմա յիշողութեամբ դարձեալ կը տեսնեմ ընկ. Պետիկ Ինճեանը՝ ձիուն վրայ. կը սլանայ քաջաբար դեպի հայկական նոր գինեալ պայքարի առաջին նահատակութեան ճամբան:

ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԻ ԽՍԲԱՊԵՏԸ

Առոյգ պատանիներ էինք եւ՝ ֆութպոլի խենթ: Հիմնած էինք Խտըրպէկի «Առիւծ» ֆութպոլի խումբը եւ նոյնիսկ կանոնաւոր փորձեր կ'ընէինք: Կը կազմակերպէինք նաեւ մրցումներ՝ Պիթիասի եւ Քեպուսիէի խումբերուն հետ:

Տարբեր ժամանակներ էին եւ՝ տարբեր խանդավառութիւն: Սակայն կար մարզական միութիւն եւ անոր շուրջ պետք էր համախըմբուէինք բոլորս:

Քանի մը առիթներով գացինք ՀՄԸՄ Այնճարի ֆութպոլի խումբին փորձերը դաշտին վրայ դիտելու, իրականութեան մէջ կը փափաքէինք մաս կազմել ֆութպոլի խումբին:

Բախտաւոր օր մը այդ երազը իրականացաւ: Սկսանք փորձերու մասնակցիլ, անշուշտ՝ որպէս պահեստի մարզիկներ: Խորքին մէջ ամիսներ միայն փորձերուն մասնակցեցանք եւ առիթ չունեցանք մրցումի մասնակցելու: Պետք էր սպասէինք յարմար առիթին, երբ տկար խումբի մը հետ մրցէինք...

Մրցումի մը առիթով, կը յիշեմ ընկ. Պետիկին արձանագրած մէկ կողը, որ շատ հեռուէն էր. գնդակը շատ բարձրէն գետին իյնալով ցատկեց բերդապահին վրայէն եւ մտաւ բերդը. սուլոցներ եւ հուռնաներ...

Ինք ֆութպոլի խումբին խմբապետն էր, կարգապահ, ընկերային եւ հոգատար:

Պուրճ Համուտի դաշտին վրայ մրցում մը ունէինք, չեմ գիտեր՝ ինչո՞ւ ինքնաշարժով գնաց եւ մեզ ալ հետը տարաւ: Մարդաշատ փողոցներէ անցանք՝ հասնելով դաշտ: Մարզական տարագով պատրաստ սպասեցինք, որ առիթ կ'ունենանք մրցումին մասնակցելու, սակայն դիմացի խումբը զօրաւոր էր, եւ մեզի առիթ չէր կրնար տրուիլ...: Յաղթանակը ապահովել եւ ՀՄԸՄ-ի վարկը պետք էր անպայման բարձր պահել:

Բոլոր մարզիկները կը սիրէին զինք. անելի՛ն, յարգանք ունէին խմբապետին հանդէպ, նոյնիսկ եթէ ամիսներով մրցումներուն մասնակցելու հնարաւորութիւն չտրուէր իրենց:

ԾԱՌԱՅՈՂ ԵՒ ԿՐԱԿՈՏ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

Ընկ. Պետիկը մեծ սեր ուներ մարզանքի, ձիու եւ զենքի: Եթէ գործոն եւ տիրական ներկայութիւն էր Այնճարի ԶՄԸՄ-ին մէջ, ապա այս մէկը երբեք արգելք չէր, որ նոյնքան գործոն եւ տիրական ըլլայ դաշնակցական երիտասարդներուն մէջ:

Նոր կեանքի կոչուած էր ԶՅԴ Լիբանանի երիտասարդական միութիւնը՝ ընդհանուր խանդավառութեան մթնոլորտի մը մէջ: ԶՅԴ ԼԵՄ-ի «Շաւարշ Միսաքեան» մասնաճիւղը ծնունդ առած էր՝ համախմբելով գիւղին երիտասարդութիւնը ազգային նպատակներու շուրջ: Եռուն ակմբային կեանք մը սկսած էր՝ երիտասարդական աւիւնով:

Ընկ. Պետիկ Ինճէեան, կամ *Ինճա Պատըրը*, ինչպէս կը կոչէին զինք իր մտերիմները, հաւատքով եւ ծառայութեան բարձր ոգիով ներկայութիւն էր ակումբին մէջ: Միշտ պատրաստ՝ աշխատելու իր ժողովուրդին համար: Իր խօսքերէն կը յիշեմ քանի մը նախադասութիւն.

«Երիտասարդները ազգին ծառաներն են, պետք է միշտ պատրաստ ըլլան որեւէ աշխատանքի յանուն մեր ժողովուրդին»:

«Պետք է մեր ակումբը վերածենք ժողովուրդին ծառայելու կեդրոնի, ուր կրնայ դիմել ոեւէ հայրենակից՝ օգնութիւն խնդրելու համար»:

«Երիտասարդները իրենց գործերով ներկայութիւն պետք է ըլլան մեր գիւղի կեանքին մէջ»:

Ոգի, հաւատք եւ ծառայելու պատրաստակամութիւն:

Այսպէս կարելի է բնորոշել ընկ. Պետիկ Ինճէեանի ազգային նկարագիրը:

ՆԱՅԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Տարօրինակ թող չթուի վերադարձը:

Բնականաբար ընկ. Պետիկ Ինճէեանի նահատակութիւնը ցնցեց Այնճարի հայութիւնը: Սուգը համատարած էր:


Հոգեհանգստեան արարողութենէն ետք Այնճարի ԶՄԸՄ-ի ակումբին մէջ տեղի ունեցաւ յիշատակի ժողովրդային հանդիպում:

Նահատակութիւնը պատահած էր հեռաւոր քաղաքի մը մէջ, ռումբի պայթիւնով:

Շատեր չէին հաւատար, թէ ընկ. Պետիկ Ինճէեանը չկար այլեւս...: Բնականաբար ամենէն շատ սուգի մատնուեցան իր գաղափարի ընկերները, իր ընտանեկան պարագաները:

Տարբեր-տարբեր պատմութիւններ կը պատմուէին մեր պատանի ընկերներու շրջանակին մէջ:

Բոլորին համար ընկ. Պետիկը հերոս էր, ինչպէս՝ Սուսա Լերան



հերոսամարտի սահատակները: Ան հայկական սոր գինեալ պայքարի առաջին սահատակն էր:

Ամիսներ յետոյ կրակոցներ լսուեցան գիւղին մէջ, վախցանք: Խմբուեցանք ակումբին բակը. լսեցինք, որ Կիպրոսի հայկական ռատիոժամէն յայտարարուած էր, թէ ընկ. Պետիկը ողջ-առողջ էր եւ շուտով պիտի հասներ Այնճար:

Ուրախութիւնը համատարած էր, կայծակի արագութեամբ լուրը տարածուեցաւ Այնճարի մէջ, սակայն յուսախաբութիւնը մեծ եղաւ, երբ հաստատուեցաւ, թէ այդ լուրը սխալ էր...

Ինչ ալ ըլլայ սակայն, ընկ. Պետիկը վերադարձաւ իր ժողովուրդին, ոչ ֆիզիքապէս, այլ՝ հոգիով եւ կենդանի օրինակով:

Տասնամեակներ ետք ան նաեւ վերադարձաւ իր սիրած ակումբը՝ որպէս յուշաքար:

Ան այլեւս ներկայ է իր ժողովուրդի ծոցին մէջ: Այնճարի «Ս. Չէլթեան» կեդրոնին մէջ կանգուն է իր յուշաքարը, իսկ բակին մէջ՝ այնճարցի սահատակներուն կոթողը:

Ընկ. Պետիկ ինձեանք պիտի մնայ որպէս Մուսա Լերան հերոսամարտի մարտիկներուն արժանի ժառանգորդներէն մէկը: Անոր օրինակն ու յիշատակը անմահ է:

Ե. ԶԱՒԱԹԵԱՆ

ԷՈՒԹԵԱՆՍ ՄԷՋ ՆԵՐԿԱՅ՝ ԸՆԿԵՐՈՋՍ ՊԵՏԻԿ ԻՆՃԷԿԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հայ ազատագրական պայքարի ճամբուն վրայ գոհուած վաղամեռ եւ անմոռանալի գաղափարակից ընկերոջս՝ Պետիկին մասին զգացումներս գրի առնելը կը յուզէ զիս եւ մտովին կը փոխադրէ մեր ծննդավայրի նորաստեղծ Այնճար հայաւանի տափաստանները, երբ Մուսա Լերան հերոսական մեր ժողովուրդը անգամ մը եւս մեծ պետութիւններու շահախնդիր ախորժակներուն ենթակայ, կը տարագրուէր եւ կը հաստատուէր Լիբանանի Պեքաա շրջանի փշածածկ, ճահճային հիւանդութիւններով լեցուն սարսափազդու միջավայրին մէջ, ուր եւ ծնունդ կ'առնէր մեր սերունդը...:

Պետիկ Ինճէեանի հետ ծանօթութիւնս ու մտերմութիւնս սկսած է մեր մանուկ հասակէն, իր եղբօր՝ վաղամեռիկ Մովսէսի հետ, մեր մօտիկ ընկերակցութիւնն ու եղբայրակցութիւնը հոգեբանական տարօրինակ կապ մը ու հոգեհարազատութիւն մը ստեղծած էին Պետիկին ու իմ միջեւ եւ աւելիով մեզ մտերմացուցած՝ պատանեկան ու երիտասարդական մեր կեանքի ճանապարհորդութեան օրերուն:

Այնճարի Հայ աւետարանական վարժարանի սեղաններէն սկսած՝ Պետիկին հետ եղանք ՀՍԸՄ-Այնճարի՝ գայլիկ, սկաուտ եւ մարզիկ ու հիմնադիրները՝ ՀՍԸՄ Այնճարի պասքեթպոլի խումբին: Ստանձնեցինք վարչական պատասխանատուութիւններ՝ սատարելով մեր սիրելի գիւղի վերելքին:

Մեր առաջին ուխտը կատարեցինք Հ.Յ.Դաշնակցութեան Այնճարի պատանեկան միութեան մէջ՝ որպէս հաւատարիմ անդամները մեր սիրած միութեան: Հետագային դաշնակցականի մեր երդումը կատարեցինք ընկեր Կարօ Սասունիի կնքահայրութեամբ, «Պատուոյս եւ հայրենիքիս վրայ...» խոստանալով մեր բոլոր ուժերովը ծառայելու մեր ժողովուրդին ու հայրենիքին: Քիչերուն պատիւ եղաւ ...«իսկ եթէ հարկ ըլլայ, նաեւ կեանքիս գնով ծառայել Հայաստանի եւ հայութեան ազատագրութեան դատին» եւ այդ քիչերէն մէկը եղաւ մերօրեայ հայ ազատագրական պայքարի առաջին նահատակը՝ Մուսա Լերան հերոսածին զաւակներէն, Այնճար հայաւանին մէջ ծնունդ առած ընկեր Պետիկ Ինճէեանը:

Ընկեր Պետիկ Ինճէեան օժտուած էր աստուածատուր ձիրքերով: Չինավարժութիւնն ու ձիավարութիւնը եղան իր հետաքրքրութիւններուն կիզակետը: Մարզական աշխարհը կլանած էր զինք եւ դարձուցած՝ մեր գիւղի ֆութպոլի լաւագոյն մարզիկն ու մարզիչը:

Սակայն այս բոլորէն աւելի գերակշռող եղաւ Պետիկին ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը: Ան եղաւ ու մնաց իր պատկանած՝ Զ.Յ.Դաշնակցութեան հաւատաւոր, գործունեայ, պարկեշտ ու զոհաբերութեան խորանին իր կեանքը նուիրաբերած անձնագոհ ընկերը:

Հայրենիքի ազատութիւնն ու անկախութիւնը եւ յատկապէս Հայոց ցեղասպանութեան պատճառով 1.5 միլիոն նահատակներու կորուստով ցեղասպան թուրք պետութեան կողմէ գրաւուած եւ իւրացուած Արեւմտեան Հայաստանի հողերուն ազատագրումը եղաւ Պետիկի կեանքի տեսլականն ու նպատակներէն գլխաւորագոյնը: Ահա այդ իսկ նպատակով, մտածուած ծրագրի գործադրութեան ընթացքին, ինչպէս Պուլկարիոյ մէջ, Վիտոշի լանջին զոհուած Զ.Յ.Դաշնակցութեան հիմնադիր անդամներէն Քրիստափոր Միքայելեանը, ռումբի պայթիւնով մը զոհուեցաւ դաշնակցական ընկեր Պետիկ Ինճեանը՝ 1976-ին, խոր ցաւ պատճառելով Զ.Յ.Դաշնակցութեան մեծ ընտանիքին, ծնողքին, հարազատներուն, համագիւղացիներուն եւ գաղափարակից ընկերներուն:

Սիրելի՛ ընկեր Պետիկ,

Ազատութեան բազինին զոհաբերուած աննման ընկեր,

Այնճար հայաւանէն մինչեւ կեանքիդ մայրամուտը, դուն եղար ազգանուէր, հաւատաւոր ու ժրաշան այն Դաշնակցական ընկերը, որ ազգասիրութիւնը ըմբռնեց էապէս՝ որպէս լիիրաւ արժէք. կուսակցականի ինքնավստահութեամբ եւ մեր ազգային իտեալներու իրականացման ի խնդիր, գիտակից հաւատարմութեամբ եւ ինքնուրոյն յանդգնութեամբ եւ հասկացողութեամբ Զ.Յ. Դաշնակցութեան ճամբով ծառայեցիր մեր ծննդավայր Այնճար հայաւանին, հայ ժողովուրդին եւ մայր հայրենիքին: Մարզական, մշակութային, ազգային եւ գաղափարական աշխատանքներուդ մէջ անգնահատելի եղաւ քու ամբողջական նուիրումդ մինչեւ կեանքիդ մայրամուտն ու վախճանը:

26-ամեայ քու ծառայական կեանքի ամբողջ տելոդութեան ընթացքին եղար եւ մնացիր հայ ազգային ժառանգութիւններուն ճշմարիտ հետեւորդն ու պահապանը: Նահապետական կրթով ու յանդգնութեամբ դիմագրաւեցիր քու դեմ ցցուած բոլոր դժուարութիւնները եւ Մուսա Լերան 18 սրբացած հերոս նահատակներու կտակին հաւատարիմ՝ մերօրեայ հայ ազատագրութեան պայքարի բազինին զոհաբերեցիր ողջ էութիւնդ:

Դաշնակցական աստուածավախ, ճշմարիտ ընկերը:

Ինքնագոհութենէդ անցած են արդէն 35 տարիներ, եւ դուն կը մնաս անմեռ, դուն կը մնաս մեր էութեան ու հոգիներուն մէջ, որպէս

հերոս, սերնդակից տիպար, «Մենք քեզ երբեք չենք մոռանար ու միշտ կը յիշենք»: Յարգանք քեզ նման, յայտնի եւ անյայտ բոլոր մեր հերոսներուն, որոնք իրենց կեանքերը զոհաբերեցին մեր ազգի եւ հայրենիքի ազատութեան սրբազան խորանին, «Դարձեա՛լ յարգանք ձեզ»:

Գրութեանս աւարտին ի խորոց սրտէ պարտք կը համարեմ երախտագիտութեան եւ գնահատանքի խօսքս փոխանցելու Յ.Յ. Դաշնակցութեան Այնճարի «Կարմիր Լեռ» կոմիտեութեան դաստիարակչական յանձնախումբին, որ բարի եւ ազնիւ գաղափարը ունեցաւ կազմակերպելու նահատակ եւ մեր գիւղին պարծանքը հանդիսացած հերոս Պետիկ Ինճեանի զոհաբերութեան 35-րդ ամեակը հրատարակելով ընկերոջ յիշատակին նուիրուած գիրք մը: Կանգնած է արդէն ժայռափոր յուշարձան մը, որպէս վկայ մեր նորահաս սերունդի պահանջատիրական անտեղիտալի կրանիթեայ կամքին: Շնորհակալութիւն կ'ուզեմ յայտնել թորոնթոբնակ գրագետ եւ բանաստեղծ կուսակցական ընկերոջս՝ Գրիգոր Յոթոյեանին, որ Պետիկ Ինճեանի կեանքին ու գործունեութեան ծանօթանալէ ետք «Պետիկ Ինճեանին - նուեր՝ անձիս» խորագրով բանաստեղծութիւն մը գրեց, որ հետագային յեղափոխական երգի վերածուեցաւ երաժշտագետ Սարգիս Յամպոյեանի կողմէ:

**«Դաշնակցութեան հնոցին մէջ թրծուած,
Յերոսներու վեհ ոգիով տոգորուած,
Յասակ առիթ, դարձար հայդուկ հայկական,
Դաշնակցական ընկեր Պետիկ Ինճեան:»**

Գ. Յ.

Ձեր բոլորին վարձքը կատար,
Փա՛ռք Մուսա Լերան հերոսածին զաւակներուն եւ
կեցցե՛ք դուք, սիրելի համագիւղացիներ:

ՅԱԿՈԲ ՃԱՆՊԱՉԵԱՆ

Թորոնթօ, Քանատա 2011

ՀՄԸՄ-ԱԿԱՆ ԵՂՔԱՅԻՐ ՊԵՏԻԿ ԻՆՃԵՏԱՆԸ

Պետիկ Ինճեճեան փոքր տարիքին մուտք գործած է ՀՄԸՄ-ի ընտանիք՝ որպէս գայլիկ, ապա՝ սկաուտ: Ան եղած է գործօն անդամ ու մեծ եռանդով վարած է բանակումներ, արշաւներ, ձիւնագնացութիւններ: Արշաւներու ընթացքին, կես գիշերին սկաուտները կը մղէր գետին մէջ լողալու ու լեռ մագլցելու: Այս արշաւներուն ու բանակումներուն ատեն երեւան կ'ելլէր եղբայր Պետիկ Ինճեճեանին եղբայրասիրութիւնը, համեստութիւնն ու նուիրուածութիւնը, որոնք դարձան վարակիչ սկաուտներուն համար: Ան ուներ բացառիկ տաղանդ՝ պատրաստելու չարքաշ ու տիպար սկաուտ: Անոր արշաւները կը սկսէին «արշաւենք դէպի Արարատ» կանչով: Եղբայր Պետիկ Ինճեճեան իր բարի նկարագրով դաստիարակեց սկաուտներու փառանգ մը՝ որպէս հայրենասէր արիւններու, որոնք դարձան «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր» նշանաբանով մարզիկներ: Ան տիպար սկաուտներ մարզելու ընդմէջէն կը ցոլացներ իր ազգանուէր ոգին:

Եղբայր Պետիկ Ինճեճեան սկաուտական կեանքին մէջ եղած է Այնճարի ՀՄԸՄ-ի միաւորի խմբապետ, սկաուտ խորհուրդ, վարչական անդամ, մասնակցած է ՀՄԸՄ-ի Շրջանային պատգամաւորական ժողովներուն: Մեծ խանդավառութեամբ սկաուտները կը մղէր մասնակցելու Մայիսեան փառատօնին:

Եղբայր Պետիկ Ինճեճեան մեծ սեր ուներ ֆութպոլի հանդէպ: Ան





կազմեց սկաուտական ֆութպոլի խումբ մը եւ մեծ նուիրումով մարզեց զայն: Ապա եղաւ Այնճարի ԶՄԸՄ-ի Ա. խումբին մարզիչն ու խմբապետը: Այնճարի ֆութպոլի խումբը կը մասնակցեր միջ-մասնաճիւղային ֆութպոլի խաղերուն: 1973-ին Լիբանանի Պեքաայի խաղերուն Այնճարի ֆութպոլի խումբը կը շահի առաջնութիւն՝ եղբայր Պետիկի ջանքերով, նաեւ կը մասնակցի Զալէպի մէջ կայացած մրցումներուն:



1974-ին եղբայր Պետիկ Ինճեան ՅՄԸՄ-ի շրջանային ներկայացուցչական ֆուլթայոլի խումբ կը հրաւիրուի որպէս մարզիկ:

Իր նախասիրութիւնն էր նաեւ ձի հեծնել: Ան ունէր ձիեր, գորս կը խնամէր մեծ սիրով:

Եղբայր Պետիկ Ինճեան մէկն է այն տիպար ՅՄԸՄ-ականներէն, որոնք կրնան օրինակ հանդիսանալ ապագայ սերունդներուն, որպէս իսկական հայ արի: Ան ՅՄԸՄ-ի ոգիով ու Դաշնակցութեան գաղափարով նահատակուեցաւ 1976 մայիս 27-ին, յանուն 1,5 միլիոն հայ զոհերու դատին ու հայրենի հողերու ազատագրման:

Սիրելի՛ եղբայր Պետիկ, յիշատակդ անթառամ պիտի մնայ ու յաւերժ ապրի ՅՄԸՄ-ի ընտանիքին մէջ:

Եղբայր **ԼԵՒՈՆ ԹԱՇՃԵԱՆ**

Այնճար



ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԳ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ

Մեր ծանօթութիւնն ու գործակցութիւնը երկար կեանք չունեցաւ, բայց այդ կարճ ժամանակահատուածի ընթացքին ան ձգեց անջնշելի հետք մը մեր վրայ, որ ուղեցոյց եղաւ մեր հետագայ գործունեութեան:

Ժամագործի իր պզտիկ սեղանին շուրջ յաճախ տեղի կ'ունենային մեր հանդիպումները: Իր խորհուրդները որպէս պատգամ կ'ընկալէինք: Ան մեր իւրաքանչիւր քայլափոխին կը հետեւէր: Իմացած էր, որ նոր հիմնուած ԼԵՄ-ին զուգահեռ, գաղտնի շարժում մը ստեղծելու աշխատանքներ կը տանէինք: Ղեկավարի իր յատուկ ճարտարութեամբ կրցաւ բացատրել մեր սայթաքումը եւ ցոյց տալով մեր արարքին ազգավնաս հանգամանքը՝ խիստ ազդարարութեամբ մը ճամբեց մեզ: Այդ հանդիպումէն ետք «նորածին շարժման» մասին ա՛լ խօսք չեղաւ:

Եսասեր չէր, բայց ամէն տեղ էր:

Յուզամոլ չէր, բայց գործի մարդ էր:

Իրեն վստահուած գործին կը փարեր ամենայն պատասխանատուութեամբ:

Առիթով մը կազմակերպած էինք ցոյց մը՝ ուղղուած գիւղին մէջ տեղի ունեցող ազգավնաս երեւոյթներու դէմ: Յոյցին իրենց մաս-



նակցութիւնը բերած էին գիւղի երեք վարժարաններու աշակերտներն ու գիւղացիներէն հոծ բազմութիւն մը: Գիւղի պատկան մարմինը չէր արգիլած ցոյցը, բայց, ըստ երեւոյթին, հեռուէն կը հետեւէր: Ցոյցը ընթացքի մէջ էր, երբ ընկեր Պետիկը իր ինքնաշարժով մօտեցաւ եւ ըսաւ ինծի, «Ե՛լ օթօ»: Իր ձայնին մէջ լրջութիւն կար եւ մտահոգութիւն: Իր կողքին նստած էր գործակից ընկեր մը: Մտավախութեամբ ելայ ինքնաշարժ: Արդեօք ցոյցը պիտի արգիլէ՞ր, բայց արդէն սկսած է, ինչպէ՞ս կարելին է ցրուել այսքան մարդ, կը մտածէի, երբ հարցուց.

- Ինչպէ՞ս կ'ընթանայ ցոյցը:

- Լա՛ւ է,- ըսի,- ամէն բան կարգին:

- Պռաւօ, որ այսքան մարդ կրցեր էք հաւաքել: Բայց մտածա՞ծ էք անոնց ապահովութեան մասին:

Անակնկալ էր հարցումը:

- Ի՞նչ ապահովութիւն, ի՞նչ բան կրնայ պատահիլ որ...

- Անփորձներ, կատարեալ գործ պիտի չկարենաք ընել: Ձեզի վստահիլ չ'ըլլար:

Նոր անդրադարձայ, որ եթէ միջադէպ մը պատահեր, պիտի անձրկէինք եւ իրար անցնէինք:

- Այս ժողովուրդին ապահովութիւնը, սկզբունքով, ձեր ուսերուն կը ծանրանայ,- ապա ժպտալով, կողքին նստած ընկերոջ նշան ըրաւ, որ իր նստած աթոռին տակէն դուրս հանեց քանի մը կտոր զէնք:

- Հիմա կրնաք ապահով զգալ,- ըսաւ յաղթական:


Այդ օր մեր գործակցութիւնը քայլ մը յառաջխաղացք արձանագրեց: Ձէնքի հետ մտերիմ մնալու մեր առաջին հանդիպումներու ընթացքին թելադրութիւններ եւ ցուցմունքներ կու տար միշտ՝ պատասխանատուի իր դիրքէն մեկնած:

- Տղա՛ք, ոչ մէկ պարագայի ձեր զէնքով ժողովուրդին նեղութիւն պիտի պատճառէք: Այդ զէնքով մենք մեր ժողովուրդին պիտի ծառայենք,- կ'ըսէր յաճախ: Եւ այդ ծառայութեան ճամբուն վրայ նահատակուեցաւ ընկեր Պետիկը՝ մնալով միշտ հաւատարիմ իր սկզբունքներուն:

Բիւր յարգանք իր յիշատակին:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽՕՇԵԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅՈՒՇԵՐ



Մանկութեանս վառ ու անդարձ գարունները թաւալեցան ընտանական ջերմ յարկի տակ: Մուսալեռոցի Յովհաննես եւ Ալիս Ինճեանները կազմած էին հայկական օճախ մը՝ ունենալով չորս զաւակներ, Պետիկ, Մովսէս, Անի, Թամար: Անոնք իրենց զաւակներուն մանուկ հոգիները կը թրծէին Մուսա Լերան հերոսամարտի պատմութիւններով եւ ազգային անանդութիւններով: Ծնողներ կանուխէն ստացան բախտի հարուած՝ տեսնելով, թէ ինչպէ՛ս Մովսէս զոհ կ'երթայ որսի արկածի:

Մանկութեանս աղօտ հորիզոնին վրայ կ'ուրուագծուի դէմքը աւագ եղբօրս՝ Պետիկին, իր գորովագութ խնամքը, իր ջերմ արտայայտութիւնը, երբ հետս կը խօսէր «աղուորիկս», «սիրունիկս» կոչելով: Միշտ կը կատարէր մանկական իմ անմեղ քմահաճոյքները ու կը ջանար գունեղ դարձնել օրերս, փոքր նուէրներով: Հազիւ չորս տարիներս բոլորած, եղբայրս՝ Պետիկ, գրկելով զիս, կը տանի Ազգային «Յառաջ» վարժարան, երբ ծնողներս կ'երկմտէին իմ մարմնային տկարութեանս պատճառով զիս դպրոց ուղարկել: Ապա յիշողութեանս գիրքէն կը բացուի աղօտ էջ մը, երբ եղբայրս՝ Պետիկ ջերմօրէն համբուրեց զիս ու խոստացաւ գեղեցիկ նուէրներ բերել: Ող-

ջագուրուելով ընտանիքի անդամներուն հետ՝ եղբայրս դուրս եկաւ տունէն: Օրերը անցան եղբօրս կարօտով, անհամբեր էի տեսնելու զայն ու ստանալու նուէրները: Օր մը, դպրոցէն վերադարձին, մեր տունը բազմութիւն տեսայ ու ներս մտնելով՝ ծնողներուս լացը լսեցի եւ ես ալ անգիտակցաբար լացի:

Ժամանակի ընթացքին մանուկ հոգիս աճեցաւ՝ լսելով եղբօրս մասին պատմութիւններ՝ ծնողներուս եւ քրոջս՝ Անիին կողմէ: Կը պատմէին Պետիկին ընկերասիրութեան եւ ծառայասիրութեան մասին: Այս բոլորը կը վկայէին նաեւ անոր ընկերները: Քոյրս՝ Անին կը խօսէր եղբօրս բարի, ազգասէր ոգիին մասին, որ ի յայտ եկաւ ֆետայական նահատակումով, երիտասարդ տարիքին: Անին կ'ըսէր, թէ եղբայրս՝ Պետիկ եղած էր ԶՍԸՄ-ական եւ ԶՅԴ-ի շարքային անդամ:

Ապա ես ականատես եղայ, թէ ինչպէ՛ս քոյրս՝ Անին հետեւեցաւ եղբօր՝ Պետիկին ուղիին, եղաւ Այնճարի ԶՍԸՄ-ի արեւուշ, ապա նաեւ՝ ԼՕԽ-ի «Աղթամար» մասնաճիւղի վարչական անդամ, Զամազ-գայինի «Պարոյր Սեւակ» մասնաճիւղի վարչական անդամ: Անին դարձեալ եղաւ ԼԵՄ-ական, ԼԵՄ-ի վարչական, եւ ԼԵՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ ու անցաւ ԶՅԴ-ի շարքերը: Այս բոլորին հետ, Անին եղաւ «Կարմիր Լեռ» կոմիտէի պաշտօնեայ քարտուղարուհի: Կը յիշեմ, քոյրս՝ Անին, ձեռքս բռնելով, զիս առաջնորդեց ակումբ ու արձանագրեց «Յառաջ» կրտսեր պատանի: Ան ամէն շաբաթ զիս կը մղէր ներկայ ըլլալու ժողովներուն: Մեր տան մթնոլորտը միշտ լեցուն էր եղբօրս նահատակութեան պատմութիւններով ու յիշատակներով: Անին ունենալով զգայուն ու խորաթափանց հոգի, եղբօր կորուստէն քանի մը տարի ետք, ինկաւ անողոք հիւանդութեան ճիրաններուն մէջ: Անին մահացաւ 25 տարեկան հասակին:

Տարիները անցան, Յովհաննէս եւ Ալիս Ինճեանները ապրեցան որդեկորոյս ծնողքի բոլոր տառապանքները: Ծնողներս հպարտ էին, որ կրցած էին իրենց զաւակներուն տալ իսկական հայու դաստիարակութիւն, որ մղած էր որդին նահատակութեան՝ յանուն ազգի, ու դուստրը՝ ծառայելու իր գիւղին: Ծնողներս հոգեպէս կը սգային իրենց զաւակներուն մահը: Անոնց համար մնացած էր միայն ամենափոքրը՝ Թամարը: Ծնողներս զիս առաջնորդեցին դէպի կեանքի լաւագոյն ուղի ու հասցուցին համալսարանական կրթութեան: Ճակատագրի ողբերգութիւնները պատճառ եղան ծնողներուս վաղաժամ հիւանդութեան ու մահուան:

35 տարիներ անցան: Օրէ օր աւելի տեղեակ եղայ եղբօրս՝ Պետիկի նահատակութեան ծալքերուն, թափանցեցի այն գիծերուն,



որոնք կը յատկանշէին Պետիկին բնաւորութիւնը: Սիրտս լեցուն էր խառն զգացումներով: Մէկ կողմէ կ'ողբայի եղբօրս կորուստը, միւս կողմէ՝ լի էի հպարտութեամբ. հոգիս կը խայտայ՝ գիտակցելով, որ եղբայրս՝ Պետիկ, Հայ յեղափոխական դաշնակցութեան զինեալ նորորեայ պայքարի առաջին նահատակն է:

Սիրելի՛ եղբայրս, խոր ակնածանքով կը խոնարհիմ շիրիմիդ առջեւ: Դուն շաղախեցիր հայկական դաստիարակութիւնն ու պապենական հերոսներու աւանդը: Դաշնակցութեան գաղափարով զինուած վրիժառու հոգիդ պոռթկաց ու խոյացաւ դէպի թշնամին: Դուն արժանի թոռնիկն եղար հերոսական Մուսա Լերան:

Հպարտ եմ քեզմով, քու սուրբ արարքով ու թողած վեհ օրինակով:

Քոյրդ՝

ԹԱՄԱՐ ԻՆՃԵՆԱՆ-ԹԱՇՃԵԱՆ

Այնճար

ԿԱՐՕՏԻ... ՊՈՌԹԿՈՒՄԸ

Մեր ընտանեկան-ազգակա-
նական կապը չեմ գիտեր՝ ուրկե՛
սկսած է: Բաւական ուշ իմացած
եմ, որ մեր մեծ մայրերը հարա-
զատներ եղած են: Ինճեան ըն-
տանիքին հետ մօտիկ էինք, սա-
կայն տարաբախտ ընտանիքին
ճակատագրին պատճառով
մայրս մեզ աւելի մտերիմ դար-
ձուց անոնց հետ՝ սփոփելու հա-
մար Ալիս ՆԵՆԷԻՆ վիշտը՝ իր
առաջին զակին կորուստով:
Հարազատութիւն մը կար մեր
մէջ եւ այդ մէկը շարունակուե-
ցաւ մինչեւ վերջ...

Յաջորդեցին ցաւալի տարի-
ներ. կարծեք՝ այս ընտանիքին
այդպէս վիճակուած էր, բայց
մենք միշտ, առանց դժկամու-
թեան, կ'երթայինք Վանիս պա-
պուկին եւ Ալիս ՆԵՆԷԻՆ քով:

Անին՝ ազնիւ հոգի մը, միասին ԼԵՄ-ական էինք մտերիմ, օրուան մե-
ծագոյն ժամերը միասին կ'անցընէինք: Բնականաբար մեզ աւելի
մօտեցուց ակմբային կեանքը. եղանք հարազատ քոյրեր:

Սակայն հետագայ տարիները մեզ հանգիստ չձգեցին. Ինճեան
ընտանիքի տան ջերմութիւնը խանգարուեցաւ. դարձեալ կորուստ:
Շփոթի մատնուած էր ամբողջ գիւղը, ցնցուած էին գիւղացիները:
Արդեօք ճի՞շդ էր գոյժը... Պետիկ մահացած էր:

Պետիկը չկայ... փսփսուք մը գիւղին մէջ...

Պետիկին կորուստը ահաւոր էր ծնողներուն համար, ցաւ մը, որ
ամբողջ գիւղինն էր... եւ համայն հայութեան եւ ՀՅԴ ընտանիքին:

Վիշտը, որ դարման չունէր, ցաւ մը, որ ոչ մէկ ճար ուներ, միսիթա-
րութեան բառեր սրբուած էին մեր բառարանէն, ի՞նչ խօսք... ի՞նչ
միսիթարութիւն եւ ի՞նչ սփոփանք... անբախտ էին Վանիս պապուկը
եւ Ալիս ՆԵՆԷՆ... Անին ու Թամարը: Այս ցնցումը շատ երկար տեւեց...

Ամեն այնճարցի, որ Ինճեաններու տան առջեւէն կ'անցներ, ցա-
ւով լի արտայայտութիւն մը կ'ունենար:



Խոր կսկիծը ընկճեց Պետիկին հայրն ու մայրը: Վիշտը մնացած էր Անիի սրտին ու հոգիին մէջ. լուռ տառապեցաւ, զուսպ ու անխօս ու այդպէս՝ տարիներ շարունակ: Սակայն Աստուած նոյն վիճակին մէջ չձգեց զիրենք, բացաւ լայն դռները, Անիի կեանքին վարդագոյն օրերը սկսան, նոր հորիզոններ, անձնական նոր յոյսեր, սակայն, դժբախտաբար, ա՛յս ալ երկար չտեւեց:

Անին՝ Պետիկին քոյրը, չափազանց գաղտնապահ, խոնարհ ու համեստ, թեթեւ ժպիտ մը ունէր դէմքին: Օր մը մտերմիկ խօսակցութեան մը ընթացքին, Անին յանկարծ պոռթկաց. «Միայն ես գիտեմ՝ ի՞նչ ըսել է կարօտ... ես գիտեմ՝ ի՞նչ ըսել է սպասել եղբօր... սպասել, որ ներկայ ըլլայ ամավերջի հանդեսիդ»: Յուզումը խեղդեց զինք եւ չկրցաւ շարունակել:

Նման պահերուն Անին սիրտը կը բանար ու կ'ըսէր. «Կարօտցած եմ եղբօրս, չեմ գիտեր՝ ո՛ր է եւ ո՛ր երկրէն պիտի գայ»:

Երբ ի յայտ եկաւ, որ ընկեր Պետիկը նահատակուած է, Անին ցաւով ըսաւ.

«Աւա՛ղ, եղբայրս տեսնելու բոլոր երազներս թաղուեցան, բայց չեմ գիտեր, թէ ինք ո՞ր թաղուեցաւ...»:

Անին ինծի կը նայէր, մինչ ես քարացած էի ի տես իր տառապանքին. զգաստացուց զիս՝ ըսելով. «Ի՞նչ է, չե՞ս լսեր զիս...»:

Մեղմ ձայնով ըսի. «Անի՛, ի՞նչ եղաւ քեզի, չեմ հաւատար, որ...», եւ չկրցայ արտայայտուիլ:

Սակայն Անին շարունակեց իր խօսքը.

«Տարիներ շարունակ կարօտս առի եղբօրս պահարանը բանալով եւ անոր շապիկները շոյելով, համբուրելով, երեւակայութեանս մէջ կար, որ պիտի վերադառնար եւ դարձեալ իմ արդուկած շապիկները պիտի հագներ: Տարիներ շարունակ ամէն առաւօտ եղբօրս դարակը կը բանայի, որ տեսնեմ իր սիրած զէնքը. տարօրինակ ուժ մը կու գար վրաս, ուժ մը, որ միտիթարութիւն կու տար ինծի, կորով, որ կարենայի մօրս եւ հօրս վիշտը սփոփել: Միեւնոյն ժամանակ հպարտանք մը ծնաւ մէջս: Նահատակի քոյր էի»:

Տարիները անցան եւ իմ սիրելի ընկերուհիիս մէջ նոր անձ մը բացայայտեցի:

Կարօտի պոռթկումի այդ խօսքերը, որպէս քոյր, Անիին փոխարէն, կը նուիրեմ Պետիկին:

ՌԻԹԱ ՔԻՄՊԵՔԵԱՆ

ՊԵՏԻԿ ԻՆՃԵՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նուէր՝ Յակոբ Ճանապարհանին

Խօսք՝ Գրիգոր Հոթոյեանի

Երաժշտ. Սարգիս Համպոյեանի

Մար շակ յո թեան հո շո պիւ Վիզ
Թոր հո աւ Յ հե թու շե թու
Վեհ ո զի ո Վ յո զոր սաճ
Իս սակ ա ո թ թ խորհար խորհար խորհար
Կամ խորհար յո կամ լի կեր
Պե պիկ ին ճի եւ շ
Սո սո լե թու շ խորհար շե թե շ
Կո սի շո կամ շ առթի հո ղե թե շ
Օր ծան ո զի շ ա յո յո թեան
հե թու լի կեր առ հո ա կամ

ՊԵՏԻԿ ԻՆՃԷԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նուէր՝ Յակոբ Ճանապազեանին
Խօսք՝ Գրիգոր Յորթոյեանի Երաժշտ. Սարգիս Յամպոյեանի

Դաշնակցութեան հնոցին մէջ թրծուած,
Յերոսներու վեհ ոգիով տոգորուած,
Հասակ առիւր, դարձար հայրուկ հայկական,
Դաշնակցական ընկեր Պետիկ Ինճեան:

Մուսա Լերան բարձունքներէն,
Պապենական սուրբ հողերէն,
Ծնած ոգին ազատութեան՝
Յերոս ընկեր առհաւական:

Հայրենական Այնճար գիւղէն մեկնեցար,
Վահագնածին խիզախութեամբ դուն հասար,
Փարիզ քաղաք՝ պատրաստելու ռումբ-ական՝
Դաշնակցական ընկեր Պետիկ Ինճեան:

Որպէս Զրիստափոր,
Հայոց Դատին եղար զինուոր,
Հարուածելու վատ թշնամին՝
Քաջակորով ընկեր անգին:

Հազարամեայ հայրենիքի կորուստով,
Մեծ Եղեռնի սարսափներու կսկիծով,
Հրդեհեցիր ըմբոստ սիրտդ վրեժով,
Սակայն ինկար պայթած ռումբի արկածով:

Ընկերներդ հազարաւոր,
Քեզ կը յիշեն արտասուաթոր,
Դո՛ւն մեռած չես իրենց համար:
Պիտի ապրիս միշտ՝ դարե-դար: